

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ — ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Աշխարհաբար թարգմանությամբ), Երևան, 1940

Պետք է շնորհավորել Պետհրատը, որ ձեռնարկել է հրատարակելու հայ պատմագիրների շարքը՝ աշխարհաբար թարգմանությամբ։ Առաջին հատորը, որ լույս տեսավ 1940 թվի վերջում, Մովսես Խորենացու Հայոց պատմությունն է։ Թարգմանությունը կատարել է ամենքիս հայտնի, բազմաշխատ և բազմարդյուն, վաստակավոր հայագետ Ստեփան Մալխասյանը։ Միայն այս անունը բավական է՝ մատնանշելու համար գործի հաջողությունը։ Հեշտ բան չէ Խորենացի հասկանալը, նրա լեզուն ունի այնպիսի առանձնահատկություններ, որոնք իրեն միայն սեփական են և սովորական գրաբարագետի համար մոռում են՝ մոլթ ու անհասկանալի։ Բայց Մալխասյանը կարդացել, ավանդել և ուսումնասիրել է Խորենացին ավելի քան 50 տարի և հետևաբար նրա միակ լավագույն մասնագետն է։

88 էջ ներածության մեջ Մալխասյանը տալիս է Խորենացու կենսագրությունը, նրա աշխատությունները, լեզվի առանձնահատկությունները, նրա գրական ու գիտական արժեքը, նրա գործած հսկայական աղբյուրությունը հայ մատենագրության վրա, այլ և բոլոր հին ու նոր քննիչների հարուցած հարցերը՝ նրա անձի և նրա Պատմության վերաբերմամբ։

Վերջին տեսակետով բանասերները երկու ընդարձակ բանակի են բաժանվում. նրանք՝ որ Խորենացուն հավատում են, ընդունում են նրան իբրև Ե դարի հեղինակ և հավատարիմ պատմիչ, և նրանք՝ որ համարում են նրան խարդախ, եղծարար, սկսած վեցերորդից մինչև իններորդ դարի հեղինակ, որ ձևացնում է իրեն իբրև հինգերորդ դարի հեղինակ, և հավատարիմ պատմիչների ավանդածները մասամբ զոդանալով, մասամբ խարդախելով՝ սարքել է իր ստահոգ «Պատմութիւն Հայոց»-ը։ Մալխասյանը առաջիններից է. նա գտնում է, որ Խորենացին Ե դարի հեղինակ է, ծնվել է շուրջ 410 թվին, աշակերտել է Մեսրոպին ու Սահակին, ուսումնառելուց հետո ուղարկվել է Ալեքսանդրիա, որտեղից վերադարձել է 439 թվից հետո, երբ իր մեծ ուսուցիչներն արդեն մեռած էին։ Խորենացին ենթարկվում է հալածանքի՝ նախ իբրև հուդեական նոր օրինատացիայի հետևորդ (մինչդեռ հենց հետևում էին ասորական օրինատացիային), երկրորդ՝ իբր քաղկեդոնական և երկաբնակ (մինչդեռ Արևելքը ընդհանրապես հակաքաղկեդոնական և միաբնակ էր), երրորդ՝ իբրև հետևող լեզվական այն նորամույժ ձևին, որ հետո վերագրվեց Դավիթ Անհաղթին և կոչվում է «հունաբան հայերեն»։

Ծեր հասակում Խորենացու պատիվը վերականգնվում է շնորհիվ Գյուլտեղաթողիկոսի, որ իր գաղափարակիցն էր, ձեռնադրվում եպիսկոպոս Բաղրեվանդի և Արշարունիքի։ Այդ միջոցին է, որ Սահակ Բաղրատունի իշխանի խնդրքով գրում է Հայոց Պատմությունը, որ ավարտում է շուրջ 483—5 թվերին։ Մեռել է 490-ական թվերին։

Խորենացին առաջին անձն է, որ գաղափարն հղացավ հայոց ազգի ամբողջական պատմությունը գրելու, այսինքն հայը իբրև ազգ մեջտեղ հանելու։ Ինքն է, որ առաջին անգամ մտածեց օգտվելու ժողովրդական վեպից (մի բան, որ պիտի աներ Ֆիրդուսին էլ՝ միայն Խորենացուց 500 տարի հետո)։ Այն թերություններն ու պակասները՝ որ գտնում ենք Խորենացու

Պատմութեան մեջ, իրենք չեն, այլ իր ժամանակինը: Շատ բան չի ունեցել Պորենացին իր ձեռքի տակ, ուստի բավականացել է եղածով, տեղ տեղ էլ ինքն է ենթադրել՝ իբրեւ բանասեր կռահելով: Շատ բան հնարել է՝ հիմնվելով հատուկ անուշների ստուգաբանութեան վրա: Հորինել է մի խումբ նամակներ՝ պատմական գեպքերից հանելով, ինչ որ թեւ աշխարհի ճշտութեամբ զատապարտելի, բայց այն ժամանակի համար ընդունելի ու սովորական երևույթ էր: Վերջապես այն բոլորը, ինչ որ քննիչները համարում են խարդախութիւն, Մալխասյանի համար առաջանում է Պորենացու չիմանալուց կամ սխալ իմանալուց:

Ներածութեան հաջորդում է Պատմութեան թարգմանութիւնը (էջ 1—252): Այստեղ է երևում Մալխասյանի հիմնական աշխատանքն ու արվեստը: Պորենացին շատ անգամ է թարգմանված հայ և օտար լեզուներով. այսպես՝ երկու երկու անգամ լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, ռուսերեն և մի մի անգամ հունգարերեն, գերմաներեն և աշխարհաբար հայերեն՝ կրկին տպագրութեամբ: Կա նաև տաճկերեն թարգմանութիւնը՝ որ անտիպ լինելով, ծանոթ չէ հասարակութեան: Մալխասյանը օգտվել է այս բոլորից, բայց ինքը միանգամայն անկախ է նրանցից և տեղ տեղ էլ տարբեր: Օրինակի համար՝ հենց գրքի վերնագիրը «Ծննդաբանութիւն Հայոց մեծաց», որ ուրիշները հասկանում են «Մեծ Հայաստանի ծննդաբանութիւնը», չի ընդունում ինքը և դարձնում է «Հայոց մեծերի ծննդաբանութիւնը» (այսպիսին հայ նահապետների և թագավորների ճյուղագրութիւնը), առարկելով թե նախ՝ երկրի և ժողովրդի ծննդաբանութիւն չի լինում, և երկրորդ՝ որ Պորենացին գրում է ընդհանուր Հայաստանի Պատմութիւնը և ոչ թե միայն Մեծ Հայքի, որ աններելի կլինէր: — Ինչ թվում է, թե արդարացի չէ այս. եթե հայոց մեծերի մասին լինէր խոսքը, Պորենացին պիտի ասեր անշուշտ «Մեծաց Հայոց» և ոչ թե «Հայոց Մեծաց», երկրորդ՝ Պորենացու Ա. գրքի մեջ բնավ չի խոսվում Փոքր Հայոց մասին. Ժ.Ղ. գլխում հիշվում է միայն՝ թե ինչպես Արամ (Մեծ Հայքի նահապետը) նվաճեց արեմոյան մասերը և կաղմեց Ա, Բ, Գ, Դ Հայքը: Վերջապես՝ եթե մի երկրի ծննդաբանութիւն չի լինում, չպիտի լինի նաև ավարտաբանութիւն. բայց ահա Պորենացու երրորդ գիրքը կոչվում է «Աւարտաբանութիւն Սերոց Հայրենեաց»: Այստեղ՝ մերոց հայրենեաց նույն է Հայոց Մեծաց հետ. ուստի հարմար էր թարգմանել «Ծննդաբանութիւն Մեծ Հայքի»:

Կարելի է այսպես տեղ տեղ տարակարծիք լինել Մալխասյանի հետ, բայց միշտ կշիռը հակելով գեպի նրա կողմը և վճռական ձայնը նրան տալով:

Գրքի վերջում (էջ 255—343) կա 358 ծանոթութիւն, որոնցով ընթերցողը լրացուցիչ բացատրութիւններ է ստանում կարդացած նյութի մասին: Սրանց հաջորդում են ժամանակագրական աղյուսակներ՝ հայ, տարսիկ, հռոմեական և բյուզանդական իրաւորների, որով փակվում է գիրքը:

Գրքի թուղթը շատ լավ է (չքեղ հրատարակութիւն), բայց կան բավական վրիպակներ. սրանցից զվարճալի է հիշել «Պաղքասէ քաղաքը» (էջ 295), որ պետք է ուղղել Բաղկալա, և «Ձայները գրում էին» (էջ 329), որ պետք է կարդալ «Հույները գրում էին»:

Հ. Աճառյան